# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լենտեքս ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | Լենտեքս ՍՊԸ | Լենտեքս | Սվիտեր՝ ուսադիրներով և տարբերանշաններով, ամենօյա Հյուսված է 50/50% բամբակ/ակրիլ թելից՝ 450-500 գ/մ2 խտությամբ՝ 6 gg - 7gg դասի հյուսվացքով: Գործվածքը խիտ, չընթարձակվող (չլոճվող) ՝ առաջնային լվացում անցած: Ուսագոտու հատվածը վրակարված և շեղանկյուն զարդակարված է (2սմ*2սմ փախլավաձև շուլալված) երկշերտ գործվածքներով (ստորի շերտը ֆլիս, վերին շերտը՝ մուգ կանաչափիրուզագույն 220-235 գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա բաղադրությամբ կամ համարժեք կտորով): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Նույնանման վրակարված են, նաև, թևքերի արմունկների հատվածը՝ օվալաձև կտրվածքով : Հյուսվածքի տեսակը՝ “half milano”: Թևքի միացման կարի մեջ մշակված են նույն գործվածքից 4,8սմ լայնությամբ ուսադիրներ, որոնց ազատ ծայրերը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կոճկվում են մետաղական կոճգամով: ՈՒսադիրների վրա անցկացվում է պատա` կոչման տարբերանշաններ (ուսադիրներ): Պատա ուսադիրները զարդանախշով են, վրան ` զինվորական կոչումներով: Թևքերն ու մարմինը հյուսված են մուգ կանաչ մանվածքից և վերջանում են 6,5-6,8սմ լայնությամբ մանժետով: Վիզը փակ, կլոր, մշակված 3սմ լայնության կրկնակի մանժետով: Ձախ և աջ թևքերին, վերին եզրակարից 9 սմ ներքև, համապատասխանաբար, կարվում են ՛՛ՀՀ զինանշան՛՛ և ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ թևքանշանները: Թևքանշանները, կրծքանշանները և ուսադիրները պատրաստված են մուգ կանաչ թելով կանաչ կտորի վրա` ասեղնագործման կամ ջակկարդ գործվածքի միջոցով, եզրերը մաքուր եզրակարված են merrow մեքենայով, մուգ կանաչ թելով: Սվիտերի արտաքին տեսքը ` համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացվող նմուշի: Չափս հասակային (42/2-70/6) և կոչումային (սերժանտականից գեներալ-մայոր) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո: Պիտակավորումը: Սվիտերի ներսի կողմից փակցվում են ծածորակի հատվածում` չափսը, ձախ կողակարին` արտադրանքի խնամքի վերաբերյալ ստուգիչ 3.5սմ*5սմ պիտակը: Պիտակի վրա պետք է նշված լինի նաև արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, մրցույթի կոդը: Փաթեթավորումը` արկղերով, մեկ արկղի մեջ` 20հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1հատ: Արկղերը` պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 10 | | | |